

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇՏԱՊՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2019/6/1-1**

ք. Երևան

« 12 » Սեպտեմբեր 2019թ.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ ի դեմս Ա.Սմբատյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Տեխնա-Մեդ» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ն.Բարսեղյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 աշխատանքային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 աշխատանքային օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 591,700,000 (հինգ հարյուր իննսունմեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո լրացուցիչ համաձայնագրի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ

աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

Առողջապահության նախարարություն
Ք.Երևան, Կառավարական տուն 3

ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
ՀՎՀՀ 02507171



ՎԱՃԱՌՈՂ

«Տելիա-Մեդ» ՓԲԸ
Ք.Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ. 2շ. N55

«Արդշինբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ 01203143
Հ/Հ 2471213171240000



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

2/ Հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ձագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	34111220/510	Ռեանիմոբիլ 1 Ford Ambulance	Hubei Dali Special Automobile Manufacturing Co., LTD	Տեխնիկական բնութագրերը ներկայացվում են կից	Հատ	34 850 000	104 550 000	3	Ք. Երևան, Կառավարության տուն 3	3	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 5 ամսվա ընթացքում
2	34111220/501	Գծային տիպի շտապօգնության մեքենա 1 Ford Ambulance	Hubei Dali Special Automobile Manufacturing Co., LTD		Հատ	27 328 571	191 300 000	7		7	
3	34111220/512	Ռեանիմոբիլ 2 Ford Ambulance	Hubei Dali Special Automobile Manufacturing Co., LTD		Հատ	34 516 667	103 550 000	3		3	
4	34111220/511	Գծային տիպի շտապօգնության մեքենա 2 Ford Ambulance	Hubei Dali Special Automobile Manufacturing Co., LTD		Հատ	27 471 429	192 300 000	7		7	

Ապրանքի

Ապրանքները պետք է լինեն չօգտագործված

ՓՆՈՐԴ

Ատողջապահության նախարարություն
 Ք.Երևան, Կառավարական տուն 3

ՎԱՃԱՌԴ

«Տելիա-Մեդ» ՓԲԸ
 Ք.Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ. 22. N55

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՎՀՀ 02507771

«Արդշինբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ 01203143

ՀՀ 2471213171240000



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

—
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « ____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « »
 « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի
 մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատակարարված ապրանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N _
 պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
 (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
 նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 Ստորագրություն

Ընդունեց

 ազգանուն, անուն

 ստորագրություն

Շարժիչային տևածար՝ դիզելային	
Շարժիչի հորտություն՝ 350 Լxժ (պտտվող)	
Արտանետումների տամարտա՝ EURO V	
Փոխանցման տուփը՝ մեխանիկական, 6 աստիճան (5 + 1)	
Վառելիքի թաք՝ 80լ	
Քաշող կամուրջի տեսակը՝ Հետևի (2x4)	
Հենքի տիպը՝ ամբողջական մետաղային	
Տրանսպորտային միջոցների արտաքին չափերը (նմ)	
Երկարություն՝ 5780	
Լայնություն՝ 2000 (սահման կողային հայելիները)	
Քարձրություն՝ 2590	
Անիվների հենք՝ 3750	
Հտապօգնության մեքենային բժշկական խցիկի ներքին չափերը պետք է համապատասխանեն.	
Երկարությունը (Պատգարակի նաղություն վրա բժշկական խցիկի հետևի պատի ներքին մասից մինչև միջնապատ (խաչաձև պատ))՝ 3050 մմ	
Լայնությունը (հատակից 800մմ բարձրության վրա)՝ 1700մմ	
Քարձրությունը (հատակից մինչև առաստաղ՝ աշխատանքային գրտիներում)՝ 1760մմ	
Ուղղու լայնությունը (արջևից/ձեռնից)՝ 1745մմ/1700մմ	
Նվազագույն բարձրությունը գետնից՝ 170մմ	
Շրջադարձման շրջան [մ]՝ 17	
Անիվ՝ ոչ պակաս քան 15"	
Անվաղողը՝ ոչ պակաս քան 215/70 R16 LT	
Բեռնատարողություն [կգ]՝ 1500	
Հրահրման կոնֆիգուրացիա	
Վարորդի նստատեղի անվտանգության բարձրի, ABS, լուսարձակներ՝ Home Safe ֆունկցիայի հետ, Արագ հատակ ֆունկցիան ֆունկցիա "Quick clear", հավասակ շաղար, կենտրոնական փակման, թրան լույսերը, պատուհանների էլեկտրական ծածկոցներ էլեկտրական պատուհաններ, օդորսակման համակարգը (առեցման և տարեցման) վարորդի և բժշկական խցիկի համար:	
Արտաքին մաս	
Շարժական պատուհանով առաջնային (ալիտան) միջնապատի առկայություն	
Շարժական և ետևի թռնելի պատուհանների վրա կիսաթափանցիկ ապակու առկայություն	
Արտակարգ իրավիճակների համար նախատեսված ելքի առկայություն // (Аварийный люк)	
Գիտամքի ձևը պետք է թույլ տա այն օգտագործել որպես արտակարգ իրավիճակի համար նախատեսված ելք մերձեայի խցիկից, դիտամքի չափը պետք է թույլատրի 500 x 700 մմ ուղղակիումու ելքը և բացվող տարածքը չպետք է պակաս լինի 0,4 մ ² -ից:	
Պատուհի անիվային կամարների առկայություն	
Կողային թափվող թրան արմիներով առաջինների առկայություն // (Ступенька раздвижной боковой двери (с алюминиевым покрытием))	
Ծավիղ ետև խարմիներով առկայություն // Складная задняя ступенька (с алюминиевым покрытием)	
Արտաքին ձևավորման և շտապ օգնության թորի (համաձայնեցվում է պատվիրատուի հետ), առկայություն	
Լույս արտազդող պիտակավորման առկայություն (համաձայնեցվում է պատվիրատուի հետ) // (Светоотражающая маркировка)	
Ինտերիեր - ուղևորների խցիկ	
2 տեղանոց, ապահովված անվտանգության գրտիներով փափուկ նստարանի առկայություն	
Բժշկի համար նախատեսված անվտանգության գրտիով պտտվող պտտի առկայություն	
Աջ կողմից անվտանգության գրտիով պտտի առկայություն	
Անջղի և կորային թռնելի բռնակների (որսչուռ) առկայություն	
Առաստաղից ամրացված բռնակի առկայություն	
Բոլոր տիպի բժշկական թափոնների համար նախատեսված միանգամյա օգտագործման տուփի, 3L, առկայություն:	
Լվացվող և չտափող, ջրամեկուսիչ կարերով, բժշկական հասակի առկայություն	
Առաստաղային ամրացված IV տիպի բռնիկի առկայություն - 1 հատ	
Արտակարգ իրավիճակների համար համախառնված մուրճի առկայություն - 1 հատ	
Արավանդի, 2 հատ, տարրությունը 5L առկայություն	
Բազմաֆունկցիոնալ օդափոխիչի առկայություն	
Բժշկական արարարությունների և պարագանների համար նախատեսված բազմաֆունկցիոնալ պահարանի առկայություն	
Բժշկական արանում օգտագործվող բոլոր նյութերը, նեոպրալ կանուլր, պետք է լինեն դիմացվում - լվացման և անխտանից միջոցների նվազումը	
Թեթևածային վանանակը 2 արագ հանվող կետերով և մանոմետրի առկայություն	
Թթվածնային համակարգը (ներառում է թթվածնային բարձրներ (4 հատ 10 լիտր զարգ) (թթվածին), թթվածին դիսոլ խորովակներով, թթվածնային կարգավորիչի հավաքածու, և ինտանկեղով շիշ)	

ԱՆՎԱՆՈՒՄ	ՊԱՀՎԵՉՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԱՍԻՆՎԱԿՐԸ	քանակ
	Թփփածի բաղադրանքի և խորտակման մասում պետք առկա լինի օդափոխության համակարգ	
	Լուսավորություն	
	Շտապօգնության մեքենաներում բժշկական խցում պետք է ապահովված լինի հետևյալ աշխատանքային լուսավորությունը	
	Էներգիայի լուսավորություն ոչ պակաս քան 100 լյուքս LED	
	Աշխատանքային ռաշտ 150 լյուքս LED	
	Պատգարակի մակերևույթ 150 լյուքս LED	
	Շտապօգնության մեքենաներում բժշկական խցում պետք է նախատեսված լինի քաղցր գույն լամպ որի լուսավորությունը 1000 լյուքս LED, լույսի դաշտի տրամագիծը, պատգարակի մակերևույթի վրա, 200մմ	
	Շտապօգնության մեքենայի ետևի և կողային շրջանում պետք է ունենան լրացուցիչ լուսավորվածություն 30 լյուքս LED	
	Մեխանիկական և էլեկտրական	
	Բժշկական հիգիենի հովանքի անջատիչի առկայություն	
	Մարտկոց 80 Աժ	
	Լրացուցիչ մարտկոց 80 Աժ	
	Էլեկտրական վերադաշնակներ (կառավարվում են հիմնական հարթակից) (12V -3հատ, 220Վ - 3հատ)	
	12-ից դեպի 220Վ ինվերտոր և կոնվերտոր (կորոսությունը 2 ԿՎտ)	
	Երևտունային ազդանշանային, արտաքին բաժնեպատիս և բարձր ճախի համակարգերի առկայություն	
	Նշում՝ Մարտկոցների ապրանքանիշները և քանակը, ինչպես նաև գնեցողության առկայությունը հանձնարարության է պատկերատուի հետ	
	Այլ պահանջներ	
	Օդի արտադուրը խցիկում ջեռուցման և օդափոխության համակարգերի գործարկման ժամանակ համապատասխանում է GB18352.5-2013	
	Շտապօգնության մեքենայի ներսում արձույթի մակարդակը համապատասխանում է GB18352.5-2013	
	Ջեռուցման, օդափոխման և օդափոխության համակարգերը համապատասխանում են GB18352.5-2013	
	Բժշկական խցիկում օդի ջերմաստիճանը համապատասխանում է GB18352.5-2013	
	Բժշկական շտապօգնության մեքենային հատակի, առաստաղի, կողային պանելների ջերմաստիճանը համապատասխանում են GB18352.5-2013	
	Նշում՝ Այլ պահանջների բաժնում նշված պահանջների համար արտադրողը պահանջում է համապատասխան վիճակներ:	
	Ավտոմոբիլային սարքավորումներ (ոչ պակաս կամ ավելի քան):	
	Պահեստային անիվ (ամբողջական չափ) - 1 հատ: Գորտակիր լայտեր - 1 հատ: Օգտագործողի ձեռնարկ - 1 հատ: Արտակարգ իրավիճակների հավաքածու վարորդի համար - 1 հավաքածու: Երկու անվտանգության հավաքածու (ձեռնախիլ և համաձեռնային), ինչպես նաև մեկ համապատասխան չափի ձեռնախիլ շրջանների հավաքածու:	
	Ստանդարտներ (փաստաթղթային վկայագրեր (վկայագրերի պատճեններ):	
	GB18352.5-2013 չափորոշիչներով կարգավորվող շտապօգնության մեքենաներ	
	Ավտոմոբիլային վերանախաշար կազմակերպություն (ԱՎՎԿՄՊՆ), որը գրառվում է մեքենայի դեպի շտապօգնության մեքենայի վերակառուցմանը, ունի ISO 9001 վկայական:	
	Այլ բնութագրեր պետք է տրամադրի նախագծային փաստաթղթեր մեքենայի դեպի շտապ օգնության մեքենաներ վերակառուցման / տեղադրված հավելվածների (պարագաների և սարքավորումների) վերաբերյալ:	
	Մեքենայի երաշխիքը տարածվում է մեքենայի բոլոր հանգուցների և օգտագործողի հավաքածուների վրա, առնվազն 1 տարվա շահագործման ընթացքում: Երաշխիքը չի ներառում նորմալ մաշվածություն, անցանկալի մեքենայի օգտագործումը և մասնագիտացված ավտոմեքենայի ոչ պրոֆեսիոնալ շահագործումը:	
	Արտադրող կամ Մասնակիցի հարաբարությունը, որ պահանջարկը շրջանակներում մատակարարվող սարքավորումները (առաջարկվող մոդելները) պետք է արտադրվեն ոչ ուշ քան հայտի բացման օրվանից 24 ամսվա ընթացքում:	
	Պահեստանաներով ապահովման ժամանակահատվածը՝ 4 (չորս) տարի:	
	Արտադրող կամ ռիստրիբյուտորի ավտոբեռնարկ:	
	Բժշկական սարքավորումների ցանկ	
	1. Պատգարակ	
	2. Լրացուցիչ պատգարակ (ծավիղ)	
	3. ԷՍԳ սարք	
	4. Պակեթների մեկխառը	
	5. Դեֆիբրիլատոր	
	6. Առաջին օգնության պայուսակ	
	Բոլոր բժշկական սարքավորումները ներառում են աշխատանքի համար անհրաժեշտ լրացուցիչ պարագաներ և սարքավորումներ	
	2. Բժշկական սարքավորումների ցանկ մեկ մեքենայի համար նախատեսված	
	Արտադրող կամ ռիստրիբյուտորի ավտոբեռնարկ: Ավտոբեռնարկի բնութագրի անհրաժեշտ է ներկայացնել բոլոր սարքավորումների համար	
	Պահեստանաներով ապահովման ժամանակահատվածը՝ 4 (չորս) տարի:	
	Արտադրող կամ Մասնակիցի հարաբարությունը, որ պահանջարկը շրջանակներում մատակարարվող սարքավորումները (առաջարկվող մոդելները) պետք է արտադրվեն ոչ ուշ քան հայտի բացման օրվանից 12 ամսվա ընթացքում:	
	Բոլոր բժշկական սարքավորումների համար, անհրաժեշտ է ներկայացնել օգտագործողի ձեռնարկը, ինչպես նաև այդ ձեռնարկների մասնագիտացված հարկեր թարգմանություն:	
	Ավտոմատ պատգարակ, որը հնարավոր է օգտագործել (իջցնել և բարձրացնել) մեկ մարդով: Պատրաստված է բարձր ամրություն այս մեխից, առկա են անվտանգության ամրակներ: Բնութագրերը տրվում են 150 կգ:	1 հատ
	Բժշկական ծավիղ պատգարակ պատրաստված բրնձեղենից և պլոստիկից	1 հատ

ԹԵՄԱ	ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ
2.3 ԷՍԳ սարք	<p>Հիմնական նպատակն է՝ տուժածների տարհանումը և տեղափոխումը դժվար պայմանների դեպքում: Հարմարավետ չափերը հնարավորություն են տալիս պատգարակն օգտագործել փրակարար ծառայությունների տարբեր սրանսպարտային միջոցներում: Երկու ամրանների միջոցով ապահովվում են պատգարակի հստակ ֆիքսումը բացված վիճակում: Հեռակների (ուտքերի) առկայություն</p> <p>Բնութագրվում է 150 կգ: Պատգարակը կիրառելի է բոլոր տիպի կայունակային պայմաններում:</p> <p>Շարժական (ոլորակային)</p> <p>Ընդհանուր զանգված և ներկառուցված վերափոխարկելի մարտկոցի առկայություն</p> <p>Մարտկոցի առկայություն</p> <p>ԷՍԳ-ի գրանցում 12 ստանդարտ ուղիներով</p> <p>LCD մոնիտորի առկայություն</p> <p>Ուղիների միացում՝ ակտիվացում և մանուալ</p> <p>Ստուգելի ադրանշանի՝ ակտիվացում և մանուալ</p> <p>Ջերմային տալիսի՝ առկայություն</p> <p>Ջերմային տալիսի թուղթ 80մմ*20մ</p> <p>Մուտքում՝ 220Վ/ 50Հց</p> <p>Արձանագրություն:</p> <ol style="list-style-type: none"> 1. Հիվանդի մարմինը 2. 6 կրծքավանդակի վերջույթների էլեկտրոդներ 3. 4 վերջույթային էլեկտրոդներ 5. 1 շեր ԷՍԳ գեյ 250մկ 6. 2 վան թուղթ 50մմ <p>Ստանդարտներ (Ֆիսիոտերապիայի վկայագրերի պատճեն)</p> <p>ԻՍՕ 13485 կամ համարժեք</p> <p>Հիվանդի մոնիտորը պատկերում է կարդիոգրամմետր, արյան ճնշումը (ոչ ինվազիվ), շնչառության արժեքները, ջերմաստիճան, արյան մեջ թթվածնի հագեցումը (SpO2) և սրտի զարկի համախառնություն (HR):</p> <p>Մոնիտոր/Էկրան</p> <p>Էկրան՝ գույնավոր TFT էկրան, էկրանի անկյունագիծ՝ ոչ պակաս քան 12.1": Միաժամանակ 5 կողի ցուցադրում</p> <p>Մոնիտորի պիքսելներ՝ 800x600</p> <p>Ներկառուցված մարտկոցի առկայություն</p> <p>Մարտկոցի գործողության ժամանակը՝ ոչ պակաս քան 2 ժամ</p> <p>Մուտքում՝ 220Վ</p> <p>Մոնիտորիցի պարամետրերը ներառում են՝ EKG, RESP, NIBP, SPO2, PULSE RATE, DUAL-TEMP S-T հատվածի համաժամանակյա հայտնաբերում և վերուժություն</p> <p>Բոլոր պարամետրերի գրաֆիկական և աղյուսակային դիտելիություն</p> <p>Ներկառուցված տալիսի առկայություն</p> <p>Արձանագրություն:</p> <p>Էլեկտրոդի լար ոչ պակաս քան 3 արտաձում</p> <p>NIBP մանժետ մեծահասակների համար</p> <p>NIBP մանժետ փոքրների համար</p> <p>ՄԷկանգամյա էլեկտրոդ 30 հատ</p> <p>SpO2 թագանկիրառելի տալիս</p> <p>Ստանդարտներ (Ֆիսիոտերապիայի վկայագրերի պատճեն)</p> <p>ԻՍՕ 13485 կամ համարժեք</p> <p>Դյուրակիր մոդել</p> <p>Էկրանի առկայություն</p> <p>Ընդարձակ ձայնային և տեսողական հուշումներ օպերատորի համար</p> <p>Էներգիայի բեխագ արտաձումն առկայություն</p> <p>Ինքնակարգաբերման առկայություն</p> <p>Սարքը կարող է օգտագործվել մեծահասակների և երեխաների համար</p> <p>Միացանյա օգտագործման տալիսների առկայություն</p> <p>Միացանյա օգտագործման տալիսներ՝ ոչ պակաս քան 100 հատ</p> <p>Ստանդարտներ (Ֆիսիոտերապիայի վկայագրերի պատճեն)</p> <p>ԻՍՕ 13485 կամ համարժեք</p> <p>Էկրանի նկարագրություն</p> <p>Բեռնակրող պլաստիկ</p> <p>Հեշտ մարգրիտ, դատարկ</p>	1 հատ
2.4 Պացիենտի մոնիտոր	<p>ԻՍՕ 13485 կամ համարժեք</p> <p>Հիվանդի մոնիտորը պատկերում է կարդիոգրամմետր, արյան ճնշումը (ոչ ինվազիվ), շնչառության արժեքները, ջերմաստիճան, արյան մեջ թթվածնի հագեցումը (SpO2) և սրտի զարկի համախառնություն (HR):</p> <p>Մոնիտոր/Էկրան</p> <p>Էկրան՝ գույնավոր TFT էկրան, էկրանի անկյունագիծ՝ ոչ պակաս քան 12.1": Միաժամանակ 5 կողի ցուցադրում</p> <p>Մոնիտորի պիքսելներ՝ 800x600</p> <p>Ներկառուցված մարտկոցի առկայություն</p> <p>Մարտկոցի գործողության ժամանակը՝ ոչ պակաս քան 2 ժամ</p> <p>Մուտքում՝ 220Վ</p> <p>Մոնիտորիցի պարամետրերը ներառում են՝ EKG, RESP, NIBP, SPO2, PULSE RATE, DUAL-TEMP S-T հատվածի համաժամանակյա հայտնաբերում և վերուժություն</p> <p>Բոլոր պարամետրերի գրաֆիկական և աղյուսակային դիտելիություն</p> <p>Ներկառուցված տալիսի առկայություն</p> <p>Արձանագրություն:</p> <p>Էլեկտրոդի լար ոչ պակաս քան 3 արտաձում</p> <p>NIBP մանժետ մեծահասակների համար</p> <p>NIBP մանժետ փոքրների համար</p> <p>ՄԷկանգամյա էլեկտրոդ 30 հատ</p> <p>SpO2 թագանկիրառելի տալիս</p> <p>Ստանդարտներ (Ֆիսիոտերապիայի վկայագրերի պատճեն)</p> <p>ԻՍՕ 13485 կամ համարժեք</p> <p>Դյուրակիր մոդել</p> <p>Էկրանի առկայություն</p> <p>Ընդարձակ ձայնային և տեսողական հուշումներ օպերատորի համար</p> <p>Էներգիայի բեխագ արտաձումն առկայություն</p> <p>Ինքնակարգաբերման առկայություն</p> <p>Սարքը կարող է օգտագործվել մեծահասակների և երեխաների համար</p> <p>Միացանյա օգտագործման տալիսների առկայություն</p> <p>Միացանյա օգտագործման տալիսներ՝ ոչ պակաս քան 100 հատ</p> <p>Ստանդարտներ (Ֆիսիոտերապիայի վկայագրերի պատճեն)</p> <p>ԻՍՕ 13485 կամ համարժեք</p> <p>Էկրանի նկարագրություն</p> <p>Բեռնակրող պլաստիկ</p> <p>Հեշտ մարգրիտ, դատարկ</p>	1 հատ
2.5. Դեֆիբրիլյատոր	<p>Էկրանի առկայություն</p> <p>Ընդարձակ ձայնային և տեսողական հուշումներ օպերատորի համար</p> <p>Էներգիայի բեխագ արտաձումն առկայություն</p> <p>Ինքնակարգաբերման առկայություն</p> <p>Սարքը կարող է օգտագործվել մեծահասակների և երեխաների համար</p> <p>Միացանյա օգտագործման տալիսների առկայություն</p> <p>Միացանյա օգտագործման տալիսներ՝ ոչ պակաս քան 100 հատ</p> <p>Ստանդարտներ (Ֆիսիոտերապիայի վկայագրերի պատճեն)</p> <p>ԻՍՕ 13485 կամ համարժեք</p> <p>Էկրանի նկարագրություն</p> <p>Բեռնակրող պլաստիկ</p> <p>Հեշտ մարգրիտ, դատարկ</p> <p>Դյուրին պատրաստված արտիթեթիկ և նեյլոնից կամ համարժեք նյութերից ջրա և յուղա դիտակրուն</p> <p>Ներկառուցված գրավանդակ և բաժնիկներով, որոնք ենշտագնում են անհրաժեշտ նյութերի կիրառումը:</p>	1 հատ
2.6 Առաջին օգնության պարուսակ	<p>Էկրանի առկայություն</p> <p>Ընդարձակ ձայնային և տեսողական հուշումներ օպերատորի համար</p> <p>Էներգիայի բեխագ արտաձումն առկայություն</p> <p>Ինքնակարգաբերման առկայություն</p> <p>Սարքը կարող է օգտագործվել մեծահասակների և երեխաների համար</p> <p>Միացանյա օգտագործման տալիսների առկայություն</p> <p>Միացանյա օգտագործման տալիսներ՝ ոչ պակաս քան 100 հատ</p> <p>Ստանդարտներ (Ֆիսիոտերապիայի վկայագրերի պատճեն)</p> <p>ԻՍՕ 13485 կամ համարժեք</p> <p>Էկրանի նկարագրություն</p> <p>Բեռնակրող պլաստիկ</p> <p>Հեշտ մարգրիտ, դատարկ</p> <p>Դյուրին պատրաստված արտիթեթիկ և նեյլոնից կամ համարժեք նյութերից ջրա և յուղա դիտակրուն</p> <p>Ներկառուցված գրավանդակ և բաժնիկներով, որոնք ենշտագնում են անհրաժեշտ նյութերի կիրառումը:</p>	1 հատ

ըստ	
2 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 10993 կամ համարժեք</p> <p>Մթերի միանգամյա օգտագործվող ներառվիչ 2 սն</p> <p>Միանգամյա օգտագործվող ներառվիչ 2 սն, պատրաստված պատրաստի պոլիպրոպիլենից, պարտադիր՝ փակ ստերիլ փաթեթավորում</p>
2 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 7886 կամ համարժեք</p> <p>Մթերի միանգամյա օգտագործվող ներառվիչ 5 սն</p> <p>Միանգամյա օգտագործվող ներառվիչ 5 սն, պատրաստված պատրաստի պոլիպրոպիլենից, պարտադիր՝ փակ ստերիլ փաթեթավորում</p>
2 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 7886 կամ համարժեք</p> <p>Մթերի միանգամյա օգտագործվող ներառվիչ 10 սն</p> <p>Միանգամյա օգտագործվող ներառվիչ 10 սն, պատրաստված պատրաստի պոլիպրոպիլենից, պարտադիր՝ փակ ստերիլ փաթեթավորում</p>
4 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 7886 կամ համարժեք</p> <p>Մթերի միանգամյա օգտագործվող ներառվիչ 20 սն</p> <p>Միանգամյա օգտագործվող ներառվիչ 20 սն, պատրաստված պատրաստի պոլիպրոպիլենից, պարտադիր՝ փակ ստերիլ փաթեթավորում</p>
1 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>Հեմոստատիկ լարան (Ճգուտ) ներերակային ներառվածան համար</p> <p>Ոչ Ստերիլ, բազմակիրապիտ</p>
1 հատ	<p>Ազատ վիճակում լարանի երկարությունը է՝ ստանդարտ 45° 2 սմ, ժապավենի լայնությունը՝ 2,5 սմ</p>
1 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 13485 կամ համարժեք</p> <p>Մանր երակների ներառվածան համար միանգամյա օգտագործման (թիթոն) կատևոր</p> <p>Թիթոն կաթնտերային ասեղը իրենից ներկայացնում է ճկուն, քարակ թափանցիկ բժշկական պոլիմերի քլորիդից պատրաստված խողովակ , որը ունի 300 մմ երկարություն և թույլ է առկա մանիպուլյացիա կատարել վնասվածքների վայրից, ակտիվացնելով ասեղի սերտիսանան վտանգը և երակային պատահական վնասը: Ասեղի չափը՝ 19G</p>
1 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 13485 կամ համարժեք</p> <p>Հեմոստատիկ սերմնակ</p> <p>Երկարությունը ոչ պակաս քան 160 մմ, նախատեսված է անոթները սեղմելու համար:</p>
1 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 10993 կամ համարժեք</p> <p>Բժշկական պինգետ</p> <p>Անատոմիական պինգետները թաղցած են երկու հարթակներից, որոնք եռակցմամբ միացված են միասին, աշխատանքի ընդացքում գալանակում են: Թիթոնների աշխատանքային մասերում առկա են փոսիկներ որոնք օգնությանը երանք նրբորեն պահում են իրավիճակները առանց նարանգ վնասելու:</p> <p>Անատոմիական պինգետները՝ միաբուժական աստիճանի չհանգրտվող պողպատից (AISI 316L կամ համարժեք)</p> <p>Պինգետի երկարությունը՝ 250 մմ ±10 մմ:</p> <p>Սպուրի լայնությունը՝ 2,5 մմ</p>
1 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 10993 կամ համարժեք</p> <p>Բժշկական միջատ</p> <p>Նյութը՝ միաբուժական աստիճանի չհանգրտվող պողպատից (AISI 316L կամ համարժեք)</p>
1 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 10993 կամ համարժեք</p> <p>Բժշկական սկալակ</p> <p>Վիրաբուժական նշուար միանգամյա օգտագործվող շերտով, պատրաստված միաբուժական չհանգրտվող պողպատից: Նշուարը պետք է մանրէազերծված է գամնա ճառագայթման միջոցով: Նշուարը անհատական վակուում փաթեթավորված է:</p>
1 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 7740 կամ համարժեք</p> <p>Նյութը՝ չհանգրտող պողպատ</p>
10 հատ	<p>Ստանդարտներ (Ֆուտստորջային վկայագրեր (վկայագրերի պատճեն))</p> <p>ԻՍՕ 7740 կամ համարժեք</p> <p>Շպատեղ փայտյա</p> <p>Պատրաստված է բարձրորակ փայտից, եզրերը կլորացված, լայն հղվված:</p> <p>Նյութ՝ փայտ</p> <p>Չափսը՝ ոչ պակաս քան 100մմ</p>

ԱՆՎՆՈՒՄ	ՊԸՆՎՆԶՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍԻՆՎՈՐՈՎ	Քանակ
Անհատական փաթեթավորմամբ		2գույգ
Մտերի վիրաբուժական ձեռնոցներ		5գույգ
Չափաբ' ոչ պակաս քան M		1հատ
Մասնագրություններ (Ֆիսիոտարաբուժային վկայագրերի պատճեններ)		
ԻՍՈ 10993 կամ համարժեք		
Ոչ Մտերի վիրաբուժական ձեռնոցներ		
Չափաբ' ոչ պակաս քան M		
Մասնագրություններ (Ֆիսիոտարաբուժային վկայագրերի պատճեններ)		
ԻՍՈ 10993 կամ համարժեք		
Արյան ճնշման չափման մեխանիկական ցորձիչ մեմբրանային ֆունկցիոնալությամբ		
Արյան ճնշման չափման մեխանիկական ցորձիչ մեխանիկական ցորձիչ սինխրոնիզացիայով: Տիպի ներքին մտասովոր տրանսդուցիչով 65 մմ: Կայուն մասեղան մեծահասակների համար, վիզալիտ, ներդնե օղակով:		
Մասնագրություններ (Ֆիսիոտարաբուժային վկայագրերի պատճեններ)		
ԻՍՈ 13485 կամ համարժեք		
Հիպոթեթիկ փաթեթը՝ առաջին օգնության համար		
Ելույթի ռետին		
Խաղաղարարություն		
Չափաբ' ոչ պակաս քան 23 x 13սմ		
Փայեթի ներառում է 1 սաք / սաք թաղանթազատվող փաթեթ		
Մասնագրություններ (Ֆիսիոտարաբուժային վկայագրերի պատճեններ)		
ԻՍՈ 13485 կամ համարժեք		
Հնամասնային սպունգ		
Հնամասնային կոլագենի սպունգը հեմոստատիկ էություն է, որը օժտված է ներծծվող (աբսորբցիոսոսի) և հավանաբարիկ հատկություններով, ինչպես նաև խթանում է հյուսվածքների վերականգնումը		
Չափաբ' ոչ պակաս քան 9 x 9 սմ		
Մասնագրություններ (Ֆիսիոտարաբուժային վկայագրերի պատճեններ)		
